

ՎԵՐԱԿԱՌԱՅՈՒՄՆԵՐ.

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՂԱՐԱՊԵՂԻ ԳԱՆՈՒԻ ՀԱՅԱ-
ԲՆԱԿԻ ԳԻՒՂԵՐԸ.

Ա.

ԴԶՄԱՌԻ ԳԱՆՈՒՄՆԵՐ.

Ա. Աղապան գիւղ.— ունի մօտ 44 տուն,
ցեխաշէն և փայտածածկ եկեղեցի, որն ու-
նի վարագոյր, շապկիներ և մի քանի
գրքեր. հօվուում է սրան Տէր Յովա-
կիմ Տէր Յովհաննիսեանը. երկու երեք
փոքրիկ սրբատեղիներ ունի իւր շրջակայքում.
երեսի յորձանոցի համարուում է Սիւան
սարի գագաթին շինուած մի աննման խաչ-
քար իբրև թէ մի ճգնաւորի գերեզմանաքար,
Համբարձման և Վարդավառին ժողովորդը
յաճախում է ուխտի: Ուսումնարան ունի 30
— 34 աշակերտներով:

Բ. Ուրգիթ գիւղ.— 40 տուն բնակիչ,
ցեխաշէն և փայտածածկ եկեղեցի, ունի մի-
այն վարագոյր, հօվուում է սրան Տէր Մար-
տիրոս Պօղոսեան. սրբատեղիներ չունի, նը-
պաստում է Աղապանի դպրոցին:

Գ. Ղալա գիւղ.— 25 տուն բնակիչ, փո-
քրը և շատ աննախանձելի փայտածածկ և
ցեխաշէն մի եկեղեցի, որ միայն վարագոյր
ունի, հօվուում է Տ. Վարդան. նպաստում
է Աղապանի դպրոցին:

Դ. Սարգու գիւղ.— 37 տուն բնակիչ
ունի, կրաշէն և կամարակապ մի եկեղեցի
ունի, որ հնութիւնից է մնացած. հարկա-
ւոր գրքերը և հանդերձեղէնը ունի գրեթէ
լրիւ. եկեղեցին լաւ է պահուում, հօվուում է
Տ. Արիստակէս Տ. Գանիէլեանը. այժմ այդ-
տեղ է նաև Տ. Միքայէլը, որ Թաւրիզից է
այժմ գնացել. ոչ այնքան հեռու այս գիւ-
ղից կան աւերակները հին Մակրի գիւղի,
իւր հոյակապ, բայց այժմ քայքայուած ե-
կեղեցիով, ուր ուխտագնացութիւն լինում
է թէպէտ սակաւ:

Ե. Ղուլուզի գիւղ.— 22 տուն բնակիչ
ունի, հողաշէն և փայտածածկ մի փոքրիկ
եկեղեցի, որ ոչինչ չունի, հօվուում է Տ.
Աղամ Տ. Սարգսեանը: Երկու ժամուայ հե-

ռաւորութեան վերայ գտնուում է հայ—
դրոնի կամ Գարանի եկեղեցին, աւերակ և
բոլորովին քայքայուած, միայն մնացած է
հիւսիսային պատի մի մասը. աւերակները
վկայում են նրա մեծութեանը, հնութեանը
և հոյակապ լինելուն:

Զ. Խանաթեան կամ Խնգիլ գիւղ.— 89—
90 տուն բնակիչ ունի, կրաշէն և հոյակապ
մի եկեղեցի, որ ունի գրքեր և հան-
դերձեղէն. գիւղը հին է և հոգով հարուստ.
հօվուում է սրան Տ. Աղամ Տ. Սարգսեանը:

Է. Թաղաշէն կամ Նորաշէն կամ Նոր
Նիւթ.— 33 տուն բնակիչ ունի, փայտա-
ծածկ և ցեխով շինուած եկեղեցի, որ մի-
այն վարագոյր ունի, հօվուում է Տ. Աղամ
Տ. Սարգսեանը. մի ժամ հեռաւորութեան
վրայ գտնուում է Նիւթի հին եկեղեցին, ո-
րի վերայ գտնուող մի արձանագրի վկա-
յութեան համաձայն 243 տ. հնութիւն է:
Այս եկեղեցին ունի հոգեր, որի արգիւնքը
հանում է Թաւրիզի Ղալայի դպրոցին: Տա-
րին երկու անգամ կարմիր կիւրակէին և
Վարդավառին եկեղեցու ուխտագնացութեան
ժամանակն է, երբ ժողովուում է բաւա-
կան խաչհամբոյր, նուիրաբերութիւններ տա-
րուայ մէջ ամէն ժամանակ լինում են. առա-
ջին յայտնի և հռչակաւոր սրբատեղին է
Ղարաղաղում:

Ը. Օղա գիւղ կամ Ալիբուլաղ.— 28 տուն
բնակիչ ունի, ցեխաշէն և փայտածածկ մի
եկեղեցի, որ ոչինչ չունի. բնակիչները
աղքատ չեն, հօվուում է Տ. Աղամ Տ. Սար-
գէսեանը. իւր բարձրութեան վերայ ունի մի
ճգնաւոր մականուանուած ուխտատեղի:

Բ.

Միջախիւրայ գաւառակ:

Ա. Մզկիլին կամ Մազկեար գիւղ.—
19 տուն բնակիչ ունի, մի քայքայուած
փայտածածկ և ցեխաշէն եկեղեցի, որ
ոչինչ չունի, հօվուում է Տ. Բաղդասար
Տ. Ղազարեանը Գլալայ գիւղում ապրող. ունի
2—3 մեծ և փոքր ուխտատեղի:

Բ. Սղան գիւղ.—44 տուն բնակիչ, եկեղեցի չկայ գիւղում: Պ. պ. Թումանեանցները հիմն են ձգել մի մեծ քարուկիր և փառաւոր եկեղեցու հովուում է սրան գիրմանուցի Տ. Ներսէս Տ. Ստեփանեանը: գիւղից 3—4 ժամուայ հեռաւորութեան վրայ գտնուում է Ս. Մարտիրոս հին եկեղեցին՝ 570 տարուայ հնութիւն. եկեղեցու արեւմտեան քայքայուած մասը անցեալ տարի նորոգել տուեց պ. Խաչատուր Թումանեանը: պատարագը լինում է այստեղ. Համբարձման և Վարդափառին հարեան գիւղերից ուխտագնացութեան են գալիս:

Գ. Գիրմանու գիւղ.—21 տուն բնակիչ ունի: աննախանձելի մի ցեխաշէն և փայտածածկ եկեղեցի. հովուում է Տ. Ներսէս Տ. Ստեփանեանը: մի երկու ուխտատեղի ունի և մի օջախ. սա եկեղեցու կամ ճգնարանի բնաւ նմանութիւն չունի: մի սաժէն և կէս երկարութիւն և լայնութիւն ունեցող մի շինութիւն է: Բնակիչներն առում են թէ շատ հին է:

Դ. Քլարայ գիւղ.—20 տուն բնակիչ ունի, ցեխաշէն և փայտածածկ գեռ և ս չօծուած մի նոր եկեղեցի որը ոչինչ չունի. հովուում է Տ. Բաղդասար Ղազարեանը:

Դ.

Զ. Մըջուան գաւառակ.

Ա. Վենա գիւղ.—5 տուն բնակիչ. երկու քարուկիր հոյակապ եկեղեցիներով. սըրանցից մինը գիւղումն է. իսկ միւսը՝ կէս ժամ հեռաւորութեան վերայ՝ ս. Յովհանէս. երկուսն էլ ունին ուխտի օրեր: Գիւղում մի անցայտ սուրբի նշխարներ կան, որի եկամուտը ամբողջապէս պատկանում է և հասնում մի ինչ որ Սուրբ Բագալին: Այս գիւղն հովուում է Տ. Մաղաքիա Տ. Յովսէփեանը:

Բ. Քարագլուխ գիւղ.—23 տուն բնակիչ ունի, կարելի է ասել եկեղեցի չունի, այնքան ունեցածը խախտուած է. ուզում են նորը շինել. հովուում է Տ. Մաղաքիա Տ. Յովսէփեանը:

Գ. Ամրագիւղ գիւղ.—33 տուն բնակիչ.

գրեթէ գետնի մէջ շինուած մութ եկեղեցիով, որ ոչինչ չունի. հովուում է Տ. Ներսէս Տ. Ստեփանեանը:

Դ. Սեւահող գիւղ.—20 տուն բնակիչ եկեղեցի չունի, ըստ սրում նոր գիւղ է, այս տարի ուզում էին շինել, հովուում է Տ. Մաղաքիա Տ. Յովսէփեանը:

Ե. Միքեղի գիւղ.—15 տուն բնակիչ, քայքայուած, ցեխաշէն ու փայտածածկ և գրեթէ գետնափոր ու ոչինչ չունեցող եկեղեցիով. հովուում է Տ. Մաղաքիա Տ. Յովսէփեանը. հեռու չէ սրանից Սէյրամայ տարր, որ նոյնպէս ուխտատեղի է Համբարձման և Վարդափառին:

Զ. Նեփիշտ գիւղ.—17 տուն ունի, վերեւ քանդուած հնութիւնից, բայց նորերումըս փայտով ծածկուած մի հին եկեղեցի որ ոչինչ չունի, բացի մի զանգակից. հովուում է Տ. Բաղդասար Տ. Ղազարեանը. մի ժամ հեռաւորութեան վրայ կայ մի աւերակ գիւղ 220—240 տարուան հնութիւն կրող մի եկեղեցիով:

Ե.

Դ. Զէյլան գաւառակ.

Ա. Սիւրիւն կամ Սքրուն գիւղ.—22 տուն բնակիչ, փայտածածկ, ցեխաշէն մի երկու պատկեր ունեցող, գրքերից և հանդերձեղենից զուրկ մի խոնաւ եկեղեցիով. հովուում է Տ. Սարգիս Տէր Մանայեանը:

Բ. Բերդին ետք.—38 տուն բնակիչ, նախորդ գիւղի պէս մի եկեղեցի ունի, սրան նոյնպէս հովուում է Տ. Սարգիս Տ. Մանայեանը:

Գ. Մելիք Ղասումի Շէն գիւղ.—54 տուն բնակիչ, ունի մի աննախանձելի եկեղեցի գրքեր և լին չունեցող, հովուում Տ. Դաւիթ:

Դ. Սըղըն գիւղ.—գրեթէ բոլորովին քայքայուած մի եկեղեցի, որ ոչինչ չունի. հովուում էր Տ. Սարգիս Տ. Մանայեանը:

Ե. Ասրան գիւղ.—32 տուն բնակիչ, հովուում է Տ. Դաւիթ:

2. Մհալե կամ Ահմադաւ.—5—6 տուն
ընակիչ մի եկեղեցի որը քայքայուած է.
Հովուում է Տ. Դաւիթ:

Է. Նորաշէնք գիւղ.—Հովուում է Տ.
Դաւիթ:

Ը. Աշրանի գիւղ.—Հովուում է Տ. Դաւիթ:

Թ. Դէգեօյ դարայ գիւղ.—Հովուում է Տ.
Սարգիս Տ. Մանայեան, ունի մօտ 30—32
տուն ընակիչ:



ԱԶԳԱՅԻՆ.

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵՎԵՂԵՅԻՆ ՊԱՐՄԱԼԱՆՑ-ԲՈՒՄ
ԵՒ

ՋԵՌԱՆՈՐ ԶԱՂՈՒԹՆԵՐՈՂՄ 1883 ԹՈՂՈՒՆ.

Ո՞ւր, երկրագնդիս ո՞ր անկիւնում չկան Հա-
յաստանեայց ս. եկեղեցու հաւատացեալներ. ցան
և ցիր, անհոյստ և անփարախ սփռուած են նրանք
Ամերիկայից մինչև Զինաստան, Ախրիբից մինչև
Հնդկաստանի կղզիքը. Փորձ փորձելով խօսել այս-
տեղ դրանց եկեղեցական կեանքի մասին, յաւակ-
նութիւն չունինք յիրաւի մի կատարեալ նկարա-
գիր տալու այդ կեանքի. մեր նպատակն է յիշե-
ցնել միայն այդ վայրաժատին հաւատացեալների
մասին և ժամանակակից խնդիրների մասին խորհր-
դածութիւնների առիթ տալ. Աւելորդ է այստեղ
կանգ առնել այն պատմական պատճառների վրայ,
որոնք այդպիսի տխուր հետեանքներ են յառաջ
բերել. մեր խնդիրը պիտի լինի քննել այդքան բա-
ժանուած և խորթացած եղբայրների մէջ միութիւն
հաստատելու և պահպանելու միջոցները. Արա հա-
մար ահա կարեոր կը լինի պատմութեան դիմել և
տեսնել թէ ի՞նչ միջոցներ էին գործ դնում մեր
նախնիք հոգեւոր կապեր պահպանելու իրենց Առ-
այ Սօր Ս. Էջմիածնի հետ և ի՞նչ միջոցների պի-
տի դիմենք մենք:

Կարծես իբրև ծաղր է հնչում այն փաստը,
որ տալիս է մեզ պատմութիւնը. Ժ. և ԺԸ. գա-
րեւում հայ եկեղեցին աւելի սերտ էր կապուած
իր կենդրոնի՝ Ս. Էջմիածնի հետ, քան թէ ԺԹ.
գարու վերջին. Երկաթուղու հետագրի
և հեռախօսի գարում մարդիկ աւելի
գոյգոյգութեամբ են հաղորդակցու-
թիւն ունենում, քան թէ կարաւանների
գարում:

Զենք առաջարկում Մովսէս, Փիլիպպոս, Յա-

կոբ, Եղիազար, Նահապետ, Աղէքսանդր և զրանց
յաջորդ բոլոր կաթողիկոսների պատմութիւնները
թերթել, այլ մասնանիչ ենք անում աւելի մեր-
ձաւոր ժամանակի, Արմէն կաթողիկոսի պատմու-
թեան և թղթակցութիւնների վրայ. թող մեր տը-
խուր եկեղեցական պատմութեան այդ էջը ստիպէ
մեզ մի վայրկեան մտածելու և մեր ստառած և իս-
պառ կտրուած յարաբերութիւնները նորոգելու.
Ամէն օր փայեակ սուրհանդակները հայրապե-
տական պատուէրները տանում էին Փքքը-Ասիա,
Վրաստան, Ռուսաստան, Կ. Պոլիս, Բալկանեան
թերակղզի, Ահաստան, Իտալիա, Պաղեստին,
Պարսկաստան և Հնդկաստան. Միմեանց յաջորդող
ուխտաւորների շղթան դարձանք բացուում և աշ-
նան էր միայն կտրուում իսկ նուիրակների անդա-
դար ուղևորութիւնները ձմեռներն անգամ չէին
ընդհատուում. Եյս փոխադարձ հոսանքները բա-
րոյական վերաշինութիւններ էին ամէն մի գաղ-
թաժայրի և նոյն իսկ Ս. Էջմիածնի համար:

Նայենք այժմեան փիճակի վրայ և քննենք
ի՞նչ կը տեսնենք արդեօք. ընդհանուր նուազու-
թիւն, փոխադարձ նիւթական և բարոյական աղ-
քատութիւն:

Միակողմանի չլինիք և չգատապարտենք մէկ-
զմէկու. մեղքը կայ՝ բաւական է, պէտք է քաւել.
Ի՞նչ կը շահենք՝ եթէ աշխարհականները հոգեւո-
րականներին մեղադրեն և փոխադարձաբար՝ Ով ա-
ւելի է հասկանում, մեղապարտը Նա է:

Ցանեակ հազարաւոր հայ ընակիչներ ունե-
ցող գաղթաժայրերն այսօր տասնեակներով իսկ հայ
չունին. սպառուել են Մոլդաւիոյ և Ահաստանի
հայերը, Բալկանն ու Թեսսալիան կորցրել են իրենց
հայ ընակիչներին, քանի մի ողորմելի բեկորներ
միայն կան այդ երկրներում. Իտալիայում մեռել է
գաղութը, մի երկու տեղ միայն գերեզմանոցներն
են վիշ նրանց գոյութեան, նոյնն է և հարաւա-
րին Ռուսիայում. Ամբողջ Եւրոպիոյ մէջ հազիւ
մի տասնեակ հայ համայնք լինի իւր եկեղեցիով և
գրանք էլ հովուապետի. Ի՞նչ խօսենք Ամերիկայի
մի տասնեակ հազար հայ խղճով գաղթականու-
թեան մասին. նրանց ևս մօտալուտ վտանգ է ըս-
պառնում, որովհետեւ վերջին գէպքերից յետոյ
անհնարին կը դառնայ գաղթականների յարաբերու-
թիւնը իրենց մայրենի երկրի հետ:

Եյս գաղթաժայրերի հովուութեան իրաւասու-
թիւնը ցարդ Կ. Պոլսի պատրիարքութեանն է եղել,
վերջին ժամանակներս սովորութիւն են դարձրել
ուղղակի Ս. Էջմիածին դիմելու և օգնութիւն խնդ-
րելու. Հասել է ժամանակը այս գաղթաժայրերի